



# ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑ



**ՉԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

## **ԱՎԱՐՏԱԿԱՆ ՉԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ՝** Միջառարկայական կապերի ապահովման կարևորությունը  
աշխարհագրությունն առարկայի ուսուցման գործընթացում

**ԱՌԱՐԿԱ՝** Աշխարհագրություն

**ԿԱՏԱՐՈՂ՝** Սոֆի Գևորգյան

**ՔԱՂԱՔ՝** Երևան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** Հ. Ավետիսյանի անվան հ. 74 հիմնական  
դպրոց

**ԴԱՍԱԽՈՍ՝** Աշոտ Խաչատրյան

## **Բովանդակություն**

Ներածություն

ԳԼՈՒԽ 1. Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում

1. 1 Գաղափար միջառարկայական կապերի մասին

1.2 Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը

ԳԼՈՒԽ 2.

2.1. Միջառարկայական կապերի իրագործման ձևերը, միջառարկայական կապերով դասի

գնահատման և վերլուծության համար առաջարկվող չափանիշները

2.2. Միջառարկայական կապերն աշխարհագրության դասաժամերին

Եզրակացություն

Գրականություն

## Ներածություն

Կրթությունը դիտարկվում է որպես երիտասարդ սերունդներին անցյալի մշակույթի և արժեքային համակարգի փոխանցման յուրահատուկ գործիք: Ինչպես նշել է ժամանակակից մանկավարժ Տ. Պ. Սալնիկովան «Կրթության առաջնային խնդիրը պիտի դառնա ոչ թե աշակերտների կողմից որոշակի գիտելիքների պաշարի, կարողությունների ու հմտությունների յուրացումը, այլ ինքնուրույն սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու ու այն վերամշակելու, կարևորն առանձնացնելու, դրանք հիշելու և իր իմացածի հետ կապ ստեղծելու աշակերտի կարողությունը»:

Խնդրի արդիականությունը. Գիտությունների ինտեգրացման ներկա ժամանակաշրջանում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Այս առումով հարկ է նշել, որ աշխարհագրությունն ունի կրթադաստիարակչական բացառիկ նշանակություն, այն ճանաչելի է դարձնում աշխարհը, ձևավորում է մատերիալիստական աշխարհայացք՝ գտնվելով բնագիտական, տեխնիկական ու հասարակական գիտությունների շփման ոլորտում և կապված լինելով յուրաքանչյուրի հետ որոշակի կապերով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում կարևորվում են միջառարկայական կապերը: Աշխարհագրության ուսուցումը անհնար է պատկերացնել առանց պատմության, բնագիտության, հայոց լեզվի, գրականության, մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի և այլ առարկաների հետ կապի:

Միջառարկայական կապերի շնորհիվ առավել մատչելի ու դյուրին է դառնում նոր նյութը ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար առարկաների ուսուցման դեպքում: Չարգացնում է սովորողի մի շարք կարողություններ, հատկապես մտածելու և տրամաբանելու տարատեսակ կարողությունները:

Աշխատանքի նպատակը.

Միջառարկայական կապերի օգտագործումը երբեք ինքնանպատակ չպետք է լինի, այլ միայն միջոց հիմնական նպատակին հասնելու համար: Աշխատանքի հիմնական նպատակն է բացահայտել աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, Էկոլոգիա, պատմություն և այլ գիտությունների միջև առկա կապերը, դրանց համակողմանի և միասնական ուսումնասիրության դերը սովորողների բնագիտական աշխարհայացքի ձևավորման գործում: Բացի այդ, դրանք նպաստում են սովորողների գիտելիքների գիտական մակարդակի բարձրացմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները:

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում է բնագիտամաթեմատիկական առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Այն ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները: Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև դասավանդման ընթացքում: Դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների ու հմտությունների զարգացումն է, որում մեծ

Ներդրում կարող է ունենալ աշխարհագրության ուսուցիչը: Աշակերտի ձեռք բերած գիտելիքները պետք է ծառայեն ոչ միայն թեստ գրելուն, այլ կյանքի ծանոթ և անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն: Այդ իսկ պատճառով ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը ըստ Հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ):

## **ԳԼՈՒԽ 1. Միջառարկայական կապերի ապահովման կարևորությունը աշխարհագրությունն առարկայի դասավանդման գործընթացում**

### **1. 1 Գաղափար միջառարկայական կապերի մասին**

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Աշխարհագրությունը ամբողջությամբ լի է միջառարկայական կապերով և առաջարկում է աշակերտներին գիտելիքներ գիտության տարբեր բնագավառներից: Միջառարկայական կապերը նպատակաուղղվում են օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի եռամիասնության՝ բնություն-մարդ-հասարակություն հասկացության ըմբռնմանը: Բնագիտական առարկաները պետք է ուսումնասիրվեն միջառարկայական կապերի ստեղծման հիման վրա: Բնագիտության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության թեմաների փոխկապակցված ուսումնասիրությունը սովորողներին ցույց է տալիս աշխարհի միասնականությունը: Աշխարհագրության ուսուցիչը, այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցելով, միջառարկայական կապերի միջոցով իրականացնում է ուսումնադաստիարակչական խնդիրների ամբողջական լուծում: Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերի իրականացման ձև են ինտեգրված դասերը: Ինտեգրված դասը պահանջում է կրթության գործընթացի մասնակիցների՝ ուսուցիչների, սովորողների, ծնողների, վարչական աշխատողների համագործակցությունը: Այսպիսով, հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

## **1.2. Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը**

Միջառարկայական կապերը ժամանակակից դպրոցական կրթության կարևորագույն սկզբունքն են, որը հանգեցնում սովորողների գիտելիքների համակարգմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի միասնականացմանը:

Բնագիտական առարկաների ուսուցման ժամանակ միջառարկայական կապերի իրագործումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը և նրա օպտիմալ կազմակերպմանը, գիտականաշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության մեջ երևույթները փոխկապվածության մեջ ընկալելուն:

Միջառարկայական կապերի իրագործումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը: Սրա իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել կամ վերհիշել կամ ձեռք բերել նոր տեղեկություններ կամ գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից: Միջառարկայական կապեր իրագործվում են և դասի սկզբին; և դասի ընթացքում, և դասի ավարտին; արտաժամյա պարապմունքների և էքսկուրսիաների ընթացքում, նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները: Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը, և դրանց կապը կյանքի հետ:

## **ԳԼՈՒԽ 2**

### **2.1. Միջառարկայական կապերի իրագործման ձևերը, միջառարկայական կապերով դասի գնահատման և վերլուծության համար առաջարկվող չափանիշները**

Կարելի է առանձնացնել դասին միջառարկայական կապերի իրագործման ձևերից հետևյալները.

Տնային հանձնարարություն և այլ առարկաներից

Միջառարկայական բնույթի խնդիրների լուծում

Արտադասարանային պարապմունքների ժամանակ աշխարհագրությունից և այլ առարկաներից միջառարկայական կապերի իրագործում (խմբակներ, վիկտորինաներ)

Միջառարկայական բովանդակությամբ միջոցառումներ(կոնֆերանս,բանավեճ):

Դասի պլանավորման ժամանակ ուսուցիչը պետք է առաջնորդվի անհրաժեշտ տեղեկատվության հավաքման և համակարգման հետևյալ սկզբունքներով.

որտե՞ղ (ո՞ր դասագրքում կամ կայքում) է անհրաժեշտ նյութը,հարակից առարկայում,

ե՞րբ է ուսումնասիրվել կամ ուսումնասիրվում տվյալ նյութը,հարակից առարկայի

նյութի համառոտ նկարագրությունը,ի՞նչ մեթոդ կամ հնար է նպատակահարմար

կիրառել հարակից առարկայի նյութին անդրադառնալիս,հետագայում, ո՞ր

առարկայում կարող է օգտագործել աշխարհագրության տվյալ նյութը:


Դասի ժամանակ աշակերտներին տևային հանձնարարությունները տրվում են, պահանջելով՝ հենվելով մի առարկայիցյուրացրած գիրելիքների վրա, բացատրել այն փաստերն ու երևույթները, որոնք ուսուցանվում են այլ դասընթացներում:

Միջառարկայական կապերով դասի գնահատման և վերլուծության համար պետք է առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

1. ուսումնադաստիարակչական խնդիրների ձևակերպման մեջ միջառարկայական կապի առկայության արտացոլում,
2. դասին կիրառվող բովանդակային-տեղեկատվական միջառարկայական կապերի տեսակներ (հետաքրքիր փաստեր, օրենքներ այլ առարկաներից ),
3. դասի ընթացքում կիրառվող մեթոդների և հնարների համապատասխանությունը դասի ուսումնադաստիարակչական պահանջներին, միջառարկայական կապերի իրագործման ժամանակ սովորողների ակտիվությունը, հետաքրքրություններն ու հաջողությունները, աշխարհագրության ուսուցչի՝ այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցության ձևերն ու մեթոդները:

## 2.2. Միջառարկայական կապերն աշխարհագրության դասաժամերին

Աշխարհագրության կապը բնությունը ուսումնասիրող այլ գիտությունների հետ ակնհայտ է, քանի որ նրանք բոլորն էլ ուսումնասիրության ընդհանուր օբյեկտ ունեն: Բանն այն է, որ բնության իմացությունը շատ բազմակողմանի է, այն ներառում է շատ տարբեր կողմեր և ասպեկտներ: Եվ մեկ գիտությունն պարզապես ի վիճակի չէ դա հասկանալ և նկարագրել: Ահա թե ինչու պատմականորեն ձևավորվել են մի քանի առարկաներ, որոնք ուսումնասիրում են շրջապատի աշխարհում տեղի ունեցող տարբեր գործընթացներ, առարկաներ և երևույթներ: Ընդհանուր առմամբ, աշխարհագրությունը բաժանված է երկու մեծ հատվածի.




Առաջինը ուսումնասիրում է բնական գործընթացներն ու առարկաները, երկրորդը՝ այն երևույթները, որոնք տեղի են ունենում հասարակության և տնտեսության մեջ:

Աշխարհագրության կապերը այլ գիտությունների հետ շատ սերտ են: Այնպես որ, նրա համար ամենամոտ **«ընտանիքն»** է.



Ֆիզիկա  
 կենսաբանություն  
 քիմիա  
 մաթեմատիկա  
 պատմություն

**Ֆիզիկա և աշխարհագրություն. Գիտությունների միջև կապը**



Մթնոլորտ թեման, մթնոլորտային ճնշման եռությունը, մթնոլորտային երևույթները, քամու ծագումը, երկրաշարժը և բնական շատ այլ երևույթներ շատ դժվար է բացահայտել ու բացատրել առանց դիմելու ֆիզիկայի դասընթացներում ձեռք բերված գիտելիքներին:

Այս երկու գիտությունների կապը դպրոցական կրթության շրջանակներում սովորողներին օգնում է ավելի լավ հասկանալ ուսումնական նյութը և հստակեցնել իրենց գիտելիքները:

Մթնոլորտային ճնշում թեման ուսումնասիրելիս կարելի է անդրադառնալ լեռներում գլխապտույտին:

Ինչու՞ ծովի մակարդակից 3500 մետրից բարձր լեռնային շրջանները ժամանած նույնիսկ ամողջ մարդիկ զգում են գլխապտույտ, հնոց և սրտխփոց:

-Ծովի մակարդակից շատ բարձր վայրերում օդի մեջ պարունակվող թթվածնի քանակը և ճնշումը փոքր են: Յետևաբար փոքր կլինի նաև արյան մեջ գտնվող թթվածնի մասնակի ճնշումը: Օրգանիզմում թթվածնի պակասությունն էլ պատճառ է դառնում վերոհիշյալ տհաճ երևույթների առաջացման:

Ինչպե՞ս են չափում ծովերի խորությունը. (Ծովեր և օվկիանոսներ թեման ուսումնասիրելիս անդրադառնում ենք անց խորությանը և սովորողների մոտ հարց է ծագում, թե ինչպես են չափում այդքան մեծ խորությունները ճշգրտությամբ )

-Ծովերի, օվկիանոսների խորությունը չափում են Էխոլոտ (ձայնախորաչափ) կոչվող



սարքի միջոցով, որն աշխատում է ձայնային ալիքների անդրադարձման օրենքների հիման վրա: Նավակողին ամրացված այդ սարքը ձայնային ալիք է ուղարկում ծովի խորքը: Ձայնը տարածվում է ջրում, հասնում հատակին և ետ վերադառնում: Նրան նորից որսում է սարքը: Գիտենալով ձայնի տարածման արագությունը ջրում, և հետևելով, թե որքան ժամանակ է անցել ձայնի առաքումից մինչև ընդունելը, գիտնականները որոշում են ծովի խորությունը:

Ի՞նչ բան են հյուսիսափայլերը, և ինչպե՞ս են նրանք առաջանում:



-Հյուսիսափայլերը Երկրի մագնիսական բևեռների մոտակայքում 100-ից մինչև 150կմ բարձրության վրա գտնվող մթնոլորտի լուսարձակումներն են, որոնք առաջանում են տիեզերքից դեպի մթնոլորտ թափանցող լիցքավորված մասնիկների (Էլեկտրոնների ու պրոտոնների) և օդի մոլեկուլների փոխազդեցության հետևանքով: Երբ այդ լիցքավորված մասնիկները հարվածում են թթվածնի ու ազոտի մոլեկուլներին ու ատոմներին, գրգռում են նրանց, այսինքն՝ բերում են նրանց ավելի մեծ էներգիայով վիճակների: Գրգռված ատոմների և մոլեկուլների վերադարձը սկզբնական հավասարակշռված վիճակի ուղեկցվում է լուսային քվանտների ճառագայթմամբ: Երկրի բևեռների շրջաններում գիշերային երկնքում բազմաթիվ մոլեկուլների այդպիսի լուսարձակումներն ընկալում են որպես հյուսիսափայլեր:

## **Կենսաբանություն և աշխարհագրություն**

Աշխարհագրության կապը կենսաբանության հետ, թերևս, առավել ակնհայտ է: Երկու գիտություններն էլ ուսումնասիրում են բնությունը: Այստեղ կենսաբանությունը կենտրոնանում է կենդանի օրգանիզմների (բույսերի, կենդանիների, սնկերի և միկրոօրգանիզմների) վրա, իսկ աշխարհագրությունը՝ նրա աբիոտիկ բաղադրիչների (ժայռեր, գետեր, լճեր, կլիմա և այլն) վրա: Բայց քանի որ բնության մեջ կենդանի և ոչ կենդանի բաղադրիչների միջև կապը շատ մոտ է, սա նշանակում է, որ այդ գիտությունները առաջնահերթ կապ ունեն:

Աշխարհագրությունը կարող է նաև օգտակար լինել կենսաբանի համար՝ որոշելու

աշխարհի տարբեր լայնություններում կենդանի օրգանիզմների տեսակների բաշխվածությունը, և թե ինչպես կարող է այդ վայրը ազդել դրանց բնութագրերի և գործառնությունների վրա: Կենսաբանության և աշխարհագրության խաչմերուկում ստեղծվել է միանգամայն նոր առարկա՝ կենսաաշխարհագրություն:

Ինչո՞ւ մթնոլորտում թթվածնի քանակը չի պակասում, չնայած ծախսվում է մեծ քանակությամբ:

-Կանաչ տերևի բջիջները կլանում են ածխաթթու գազ, իսկ օդին տալիս են թթվածին: Տերևները բջիջներում առկա կանաչ գույնանյութ՝ քլորոֆիլի միջոցով կլանում են լուսային էներգիան, իրենց հերձանցքներով օդից վերցնում են

8

ածխաթթու գազը, հողից արմատներով վերցնում են ջուր և սինթեզում են օրգանակն նյութեր, որոնք անհրաժեշտ են բույսին կյանքի համար: Այս գործընթացի արդյունքում մթնոլորտ է արտազատվում կենսատու թթվածին: Ահա թե ինչու թթվածնի քանակը մթնոլորտում գրեթե չի փոփոխվում:

Ինչո՞ւ է Նեգրոիդ ռասայի ներկայացուցիչների մաշկի գույնը սև. (Յարցադրում ռասաներ թեման ուսումնասիրելիս).

-Ռասայական շատ հատկանիշներ ունեն հարմարվողական նշանակություն: Ասիայի և Աֆրիկայի շոգ կլիմայական պայմաններում արևի կիզիչ, վնասակար ճառագայթներից կարող է պաշտպանել միայն մաշկի մուգ երանգը: Մաշկի մուգ երանգը պայմանավորված է մելանինի քանակով: Մելանինը կլանում է ուլտրամանուշակագույն ճառագայթները:

Մելանինները սև, շագնակագույն, կարմիր կամ դեղին պիգմենտներ են, որոնք պարունակվում են մաշկում, մազերում: Նեգրոիդ ռասայի ներկայացուցիչների մաշկի տակ մելանինի քանակը բավականին մեծ է, որով էլ պայմանավորվում է մաշկի մուգ գույնը:

## Քիմիա և աշխարհագրություն



Բնագիտության դասի մեկ այլ առարկա, որը բավականին սերտ կապեր ունի աշխարհագրության հետ, քիմիան է:

Աշխարհագրության որոշակի թեմաների ուսումնասիրությունն ուղղակի անհնար է առանց քիմիայի համապատասխան գիտելիքների: Առաջին հերթին կապը դրսևորվում է հետևյալ հարցերին անդրադառնալիս.

9

բնապահպանական խնդիրներ  
օգտակար հանածոների բաշխում երկրի ընդերքում  
օվկիանոսի ջրի աղիությունը  
մթնոլորտ, մթնոլորտի կազմը  
ջրի քիմիական կազմը  
քիմիական արդյունաբերություն:

Ի՞նչ է թթվային անձրևը, որն է դրա առաջացման պատճառը.




-Թթվային անձրևները առաջանում են արդյունաբերական ձեռնարկությունների, գործարանների, ջերմոլեկտրակայանների անփույթ աշխատանքի հետևանքով, մթնոլորտ արտանետված գազերից /so2, so3, ուo, ուo2, /, որոնք միանալով օդի ջրային գոլորշիների հետ, առաջացնում են թթուներ / H2so3, H2so4, Hno2, Hno3 /, որոնք ձյան և անձրևի տեսքով թափվում են երկրի մակերևույթի վրա::

Ի՞նչ գազերից է կազմված մթնոլորտը.

-Մթնոլորտը տարբեր նյութերի խառնուրդ է: Այն կազմված է թթվածին՝ 21%, ազոտ՝ 78%, արգոն, օզոն, ածխաթթու գազ, ջրային գոլորշիներ, ծխի մասնիկներ:

## Մաթեմատիկա և աշխարհագրություն



Մաթեմատիկայի և աշխարհագրության միջև կապը կարելի է անվանել շատ սերտ:

Այսպիսով, անհնար է մարդուն սովորեցնել, թե ինչպես օգտագործել աշխարհագրական քարտեզը կամ տարածքի պլանը՝ առանց հիմնական մաթեմատիկական գիտելիքների և հմտությունների:

Մաթեմատիկայի և աշխարհագրության կապը դրսևորվում է այսպես կոչված աշխարհագրական խնդիրների առկայության պայմաններում: Օրինակ՝

որոշել հեռավորությունները քարտեզի վրա

մասշտաբը որոշելու ժամանակ

հաշվարկել լեռան բարձրությունը ըստ ջերմաստիճանի կամ ճնշման ցուցանիշների ժողովրդագրական հաշվարկներ և այլն:

## Պատմություն և աշխարհագրություն



### **«Պատմությունը ժամանակի մեջ աշխարհագրություն է, և աշխարհագրությունը պատմությունն է տարածության մեջ»:**

Այս անսովոր ճշգրիտ միտքը արտահայտեց ժան-ժակ Ռուսսոն: Պատմությունը կապված է բացառապես սոցիալական աշխարհագրության (սոցիալական և տնտեսական) հետ:

Այսպես, որևէ երկրի կամ աշխարհի բնակչությունն ու տնտեսությունն ուսումնասիրելիս չի կարելի անտեսել դրա պատմությունը, այսինքն սովորողը պետք է հասկանա որոշակի տարածքում տեղի ունեցած պատմական գործընթացները:

Ի՞նչ փոփոխություն կրեց աշխարհի քաղաքական քարտեզը առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո. (Աշխարհի քաղաքական քարտեզ)

-Առաջին աշխարհամարտից հետո կործանվեցին Ռուսական, Ավստրո-Յունգարական, Օսմանյան կայսրությունները, վերացան քարտեզից, դրանց փլատակների վրա ձևավորվեցին և քարտեզի վրա հայտնվեցին մեկ տասնյակ ինքնիշխան պետություններ:

Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիան բաժանվեց երկու պետության, քարտեզի վրա առաջացան ԳԴՀ և ԳՖՀ:

Հայկական լեռնաշխարհը, Հայաստանը ուսումնասիրելիս անհնար է պատմական ակնարկ չկատարել դարերի խորքից եկող հայ ժողովրդի բնօրրանի մասին:

## Աշխարհագրություն- գրականություն

Բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործություններում բնութագրվում է աշխարհագրական այս կամ այն երևույթը, օբյեկտը կամ խոսվում է ինչ-որ բնակավայրի, տեղանքի մասին : Բազմաթիվ բանաստեղծություններ բնութագրում են շրջակա աշխարհը՝ նպաստում երևույթների աստիճանական ճանաչմանը : Օրինակ Համո Սահյանի Գետը բանաստեղծությունը.

Գետը լեռներից շառաչով գալիս  
Եվ անց է կենում դաշտերի միջով,  
Կանչում – կարկաչում, հորձանք է տալիս,  
Ափերն է զուգում գմբուխտ կանաչով:  
Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին  
Եվ կաթիլն անգամ զուր չի կորցնում,

Կյանքի է կոչում կայաններ լույս  
Եվ ինքն իր ճամփին լույս տալով գնում...  
Այսպես վաստակած նա ծով է մտնում,  
Եվ ծովն է վերջին կայանը նրա,  
Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում,  
Նավեր է պահում իր կրծքի վրա...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆ. ԱՐԱԳԱԾԻՆ

Դո՛ւ, Արագա՛ծ, ալմաստ վահան

Կայծակեղեն թրերի,

Գագաթներդ՝ բյուրեղ վրան

Թափառական ամպերի...

Աշխարհագրության դասերին հաճախ կիրառում ենք աշխարհագրական այս կամ այն  
երևույթին կամ օբյեկտին

վերաբերող հանելուկներ. (Յանելուկներ. Ներսես Շնորհալի)

Ճնվում է ու մեծանում,

Ջենց նույն օրն էլ՝ մահանում,

Ջետո նորից կյանք առած

Պայծառ շորեր է հագնում: (Արև)

Մի օձ կա մեծ, գույնը կապույտ,

Յա գնում է պտույտ-պտույտ,

Նրանով են սնվում անվերջ

Ճամ ու ծաղիկ, խոտ ու առվույտ (Գետ)

## Եզրակացություն

Այսպիսով, հստակ կարող ենք ասել, որ բոլոր գիտությունները միմյանց հետ կապված են բազմաբնույթ կապերով:

Աշխարհագրության կապերը այլ գիտությունների հետ նույնպես բավականին շատ են: Ժամանակակից ուսուցչի առաջադրանքներից մեկն այն է, որ միջառարկայական կապերի հստակ օրինակներ ցույց տա: Սա չափազանց կարևոր պայման է որակյալ կրթական համակարգ կառուցելու համար: Միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը հնարավորություն է տալիս հարակից առարկաներից ավելի վաղ ուսումնասիրած հասկացություններն ու օրենքները կիրառել տվյալ պահին ուսումնասիրվող ուսումնական առարկայի գիտելիքների համակարգում:

Միջառարկայական բնույթի խնդիրների կազմումն ու լուծումը նպաստում են ճանաչողության գործընթացի ակտիվացմանը՝ խթանելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումը: Առավել մոտ լինելով իրականությանը և բնական իրավիճակներին՝ դրանք նպաստում են տարբեր երևույթների ավելի բազմակողմանի և խորքային ընկալմանը, զարգացնում են սովորողների՝ բնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները: Այդ խնդիրները ոչ միայն հետաքրքիր են, այլև բացահայտում են սովորողների ստեղծագործական ներուժը, զարգացնում պատկերավոր մտածողությանը և նպաստում են նրանց գիտական աշխարհայացքի ձևավորմանը: Նշված առավելություններով հանդերձ, տարբեր առարկաների հատման տիրույթին վերաբերող միջառարկայական բնույթի խնդիրները դպրոցական խնդրագրքերում գրեթե բացակայում են, ուսուցիչները դրանց, որպես կանոն ուշադրություն չեն դարձնում, իսկ սովորողները դժվարանում են լուծել այդպիսի խնդիրներ: Պատճառն այն է, որ միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը պահանջում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն հիմնական և հարակից առարկաներից, ինչպես նաև լուծման յուրահատուկ մեթոդների կիրառման կարողություններ և հմտությաններ: Բնական է, որ ուսուցման որոշակի փուլում այդ գիտելիքները դեռևս կապված չեն միմյանց, ուստի դրանց համատեղ կիրառումն առաջացնում է որոշակի դժվարություններ: Մ. Ն. Սկատկինը գրում է. «Ձարմանալի բան է ստացվում, կան գիտելիքներ, բայց դրանք մեռած բեռի պես սովորողի գլխում են, և նա չի կարողանում հասկանալ, թե հենց ո՞ր գիտելիքները և ինչպե՞ս կիրառելով է հնարավոր լուծել տվյալ խնդիրը :

Շատ թեմաներ կան, որոնց ուսումնասիրությունը պետք է ուղղակիորեն շաղկապված լինեն հարակից առարկաներից ձեռք բերված գիտելիքների հետ, դա վերաբերվում է աշխարհագրությանը, ֆիզիկային, քիմիային, կենսաբանությանը, ինչպես նաև պատմությանը: Երբեմն ծրագրերի անհամապատասխանություն է լինում, որը բարդացնում է այդ աշխատանքը, բայց դա չի խանգարում, քանի որ եթե անգամ տվյալ նյութը մյուս առարկայից անցել են այլ դասարանում նրանց համար կլինի կրկնություն և գիտելիքի վերաարժևորում:

Ինքս կարևորում եմ միջառարկայական կապերն ու նրա նշանակությունը հատակապես աշխարհագրության ուսուցման գործընթացում: Այդ նպատակով էլ իմ մասնագիտական ամբողջ գործունեության ընթացքում փորձել եմ ստեղծել ու ստեղծելու եմ այդպիսի դասեր:

## Գրականություն

1. Դայան Սիմա Ծերունի, Աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները Արևմտյան Հայաստանի դպրոցներում 19-րդ դարի 2-րդ կեսին, ԺԳ.00.02- & & Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա & & (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության Սեղմագիր, Երևան-2012, (Էջ 17-19)
2. Խաչատրյան Իրինա Էդուարդի, Ախարհագրության և ֆիզիկայի միջառարկայական կապերը, որպես դպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման գործոն ԺԳ.00.02- & & Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա & & (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության Սեղմագիր, Երևան-2014:
3. Ա. Մ. Խանբեկյան, Ն. Գ. Խրիմյան, ... Չարմանահրաշ ֆիզիկա, Նոր դպրոց, Երևան, 1996թ
4. Մարթա Գումիլևսկայա, Ինչու է այդպես լինում, Երևան, & & Լույս & & - 1980
5. Ֆելիքս Լև, Ինչից է ամեն ինչը, Երևան, & & Արևիկ & & - 1988
6. <https://forum.armedu.am/> ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՄԻՋԱԿԱՅՐ
7. <https://znanio.ru/media/rol-mezhdistsiplinarnyh-svyazej-v-fizike-2614429>